

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁԻՆ

Յուրաքանչյուր ծնողի համար երեխային մանկապարտեզ տանելը անհանգստություն, երկմտանք է պատճառում՝ կապված երեխայի հարմարվելու և դրանցից բխող այլ հարցերի շուրջ: Այդ իմաստով շատ կարևոր է, որ ծնողն արժևորի մանկապարտեզի դերն ու նշանակությունը՝ միտված երեխայի հոգեբանական զարգացմանը: Հարմարեցման փուլում անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները:



Մանկապարտեզներում երեխայի սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունների ուսումնասիրումն ու մանկավարժ-ծնող համատեղ աշխատանքը կազմակերպելիս կարևոր է հաշվի առնել, թե ընտանիքի որերորդ երեխան է պատրաստվում մանկապարտեզ հաճախել: Առաջնեկի դեպքում մոր և ընտանիքի անդամների հետ երեխայի կապվածությունը խոցելի է դարձնում նրան և դժվարեցնում ուրիշների հետ փոխհարաբերությունների ձևավորմանը: Երկրորդ, և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ադապտացումը սովորաբար ավելի հեշտ է ընթանում:

Երեխայի հոգեբանական զարգացմանը միտված ամենակարևոր հմտություններից մեկն էլ ինքնուրույն զբաղմունք գտնելն է: Բոլոր

երեխաներն ունեն միայնակ մնալու, ինքնուրույն խաղալու հմտության նախադրյալներ:

Ծնողի պարտականությունն է նպաստել և հետևել, որ այն աստճանաբար զարգանա: Ճիշտ այնպես, ինչպես ձեր երեխայից սպասում եք, որ նա պիտի խոսի և քայլի, այդպես էլ նա պետք է կարողանա ինքնուրույն զբաղմունք գտնել, և եթե նրա քայլերը կամ խոսելը ուշանում է՝ սկսում եք անհանգստանալ, պետք է անհանգստանաք նաև, եթե երեխան սիստեմատիկորեն հրաժարվում է միայնակ մնալուց:

Հարմարեցման փուլը սթրեսային է և՛ երեխայի, և՛ ծնողի, և՛ դաստիարակի համար:

Ինչպես կազմակերպել երեխայի հարմարեցման փուլը, որ այն սթրեսային չլինի, այլ դեպի մանկապարտեզ անցումը լինի սահուն:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ

Անհրաժեշտ է, որ ծնողները երեխային նախապատրաստեն մանկապարտեզ հաճախելուն: Երեխային մանկապարտեզ հաճախելուն **նախապատրաստական փուլում** համար հարկավոր է, օրինակ՝

- ✓ Երեխային հաճախակի թողնել ընտանիքի անդամների մոտ:
- ✓ Երեխայի զբոսանքը կազմակերպել մանկական այգիներում՝ ապահովելով շփումը մյուս երեխաների հետ:
- ✓ Երեխայի հետ այցելել մանկական թատրոններ, ժամանցի վայրեր, զարգացման կենտրոն:
- ✓ Երեխայի առօրյան կազմակերպել մանկապարտեզի ժամանակացույցին /ռեժիմ/ մոտ:
- ✓ Երեխային պատմել մանկապարտեզի մասին՝ այնտեղ շատ երեխաներ կան, հետաքրքիր խաղեր են խաղում, դու նոր ընկերներ ձեռք կբերես և այլն:

- ✓ Պատմեք պատմություններ ձեր մանկապարտեզից, ինչ չարաճճիություններ եք արել, ինչպիսին էր ձեր դաստիարակը և այլն: Ցույց տվեք երեխային ձեր մանկապարտեզի լուսանկարներից:

ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ՓՈՒԼ

Երբ երեխան սկսում է հաճախել մանկապարտեզ, սկսվում է **հարմարեցման փուլը**: Մանկապարտեզ հաճախելու առաջին օրը ծնողը պետք է լինի երեխայի կողքին, մնա նրա տեսադաշտում: Առաջին օրերի համար կարելի է այցելել մոտ 1 կամ 2 ժամով, հետևել, որ երեխան շփվի խմբի մյուս երեխաների հետ: Անպայման վերադառնալ, եթե երեխան հուզվի կամ զգա ծնողի կարիքը: Երբեք չի կարելի երեխային թողնել և հեռանալ առանց զգուշացնելու:

Բոլորս էլ գոնե մեկ անգամ ականատես ենք եղել, թե ինչպես են մանկապարտեզում ձեր ներկայությամբ երեխային շեղում, որ մայրիկն անսկատ հեռանա խմբասենյակից: Այս սխալ մոտեցման արդյունքում, շատ երեխաներ մեծանալով ունենում են վախեր, զանազան հոգեբանական և առողջական խնդիրներ: Վերոնշյալ խնդիրներից խուսափելու համար անհրաժեշտ է երեխային զգուշացնել, հետո միայն հեռանալ: Դրանով երեխան վստահություն է ձեռք բերում ծնողի նկատմամբ և այլևս չի անհանգստանում, որ ամեն րոպե մայրը կարող է հանկարծակի հեռանալ:

Անհրաժեշտ է, որ երեխան իմանա, որ ծնողը սպասում է իրեն մանկապարտեզի միջանցքում կամ բակում: Մյուս փուլում, երբ երեխան արդեն քիչ թե շատ հարմարվել է, ծնողը պետք է խոսի երեխայի հետ իր բացակայության մասին: Երեխային պետք է ասել, որ կգա, օրինակ՝ ճաշից հետո, ու անպայման կատարի տված խոստումը: Այս հարցին ծնողը պետք է մոտենա մեծ պատասխանատվությամբ, լինի երեխայի հետ համբերատար ու շատ ջերմ:



Մանկապարտեզին հարմարեցման փուլում կարելի է թույլ տալ, որ երեխան տնից իր հետ տանի իր սիրելի որևէ իր, խաղալիք: Այդ կերպ նա իր հարազատ միջավայրից մասնիկ կունենա անծանոթ վայրում, ինչը կօգնի մեղմել իր միայնության զգացումն ու բացասական հույզերը:

Որպեսզի մանկապարտեզ հաճախելը չընկալվի որպես պատիժ կամ, վատ տեղ ` պետք է միշտ դրական արտահայտվել մանկապարտեզի մասին, երբեք չվախեցնել, թե կթողնեն նրան այնտեղ: Դա կարող է ճակատագրական դառնալ երեխայի ադապտացիայի համար:

Շատ կարևոր է ընտանիքի անդամների ներգրավվածությունը երեխայի հարմարեցման գործընթացում: Նրանք պետք է սատարեն, աջակցեն ոչ միայն երեխային, այլև մայրիկին: Բոլորն անխտիր պետք է գովեն երեխային լավ հաճախելու համար, գովեն այլոց մոտ, խոսեն երեխայի փոքրիկ ձեռքբերումների մասին: Խրախուսեն բոլոր հնարավոր ձևերով, շահագրգռեն երեխային: Մանկապարտեզի մասին միշտ խոսեն հիացմունքով:

Երբեմն պատահում է, որ երեխան մանկապարտեզից հանգիստ հրաժեշտ է տալիս ծնողին, ողջ օրն առանց լացի անցկացնում և թվում է, որ հարմարեցման փուլն արդեն ավարտված է, սակայն նա

ընդհանուր առմամբ լավ չի սնվում, տխուր է, գիշերը լացով արթնանում է, տազնապաժ է: Հնարավոր է, որ երեխան իրեն վատ է զգում, բայց ոչ մի ձևով չի արտահայտվում՝ բացասական հույզերը կուտակելով իր մեջ: Այս առումով չափազանց կարևոր է ուշադրություն դարձնել այս նշաններին, մշտապես կապի մեջ լինել դաստիարակի հետ, քննարկել անհանգստացնող երևույթները:

Մանկապարտեզին երեխայի հարմարեցման փուլը համարվում է ավարտված, երբ երեխան զգում է իրեն ներդաշնակ, ազատ ու անկաշկանդ, շփվում է, խաղում, քնում, ուտում իր սովորական խառնվածքին համարժեք՝ դրսևորում է իրեն այնպես, ինչպես տանը: